



Մ ՈՒՐՐԵ Յ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ Խ ԿԵՂԵՅԻ



ԽԱՉՎԵՐԱԾ
15 ՍԵՂՏԵՄԲԵՐ 2019

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցում	Էջ 2

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳՐՔԷՆ

(49.13-23)

Ուրախացի՛ր երկինք, ցնծա՛ երկիր, ուրախաձայն աղաղակեցէք, ո՛վ լեռներ, Տիրոջ արդարութիւնը պատմեցէք, ո՛վ բլուրներ, որովհետեւ Տէրը իր ժողովուրդին ողորմեցաւ եւ իր ժողովուրդին խոնարհները մխիթարեց: Երուսաղէմի ժողովուրդը կ'ըսէր. «Տէրը զիս լքեց ու մոռցաւ»: Բայց Տէրը կ'ըսէ. «Միթէ մայր մը կրնա՞յ իր դիեցուցած զաւակը մոռնալ, կամ իր որովայնէն ծնած երեխային չգլթալ. բայց նոյնիսկ եթէ այդպիսի մայր մը գտնուի, ես քեզ պիտի չմոռնամ բնաւ: Տե՛ս, ահա, քեզ ամբարձար մէջ նկարեցի, եւ աւերակ պարիսպներուդ պատկերը միշտ աչքիս առջեւ է: Շուտով զաւակներդ կը վերադառնան, մինչ քեզ քանդողներն ու աւերողները կը հեռանան: Շուրջդ նայէ եւ տե՛ս, արդէն զաւակներդ կը հաւաքուին ու քեզի կու գան: Եւ ես, կենդանի Աստուածս, կ'ըսեմ. անոնք

քեզ պիտի ծածկեն պատմուճանի պէս եւ անոնցմով պիտի զարդարուիս հարսի պէս: Աւերակներդ եւ քանդուած ու կործանած քաղաքներդ շուտով նեղ պիտի դան բնակիչներուդ համար, եւ քեզ հարստահարողները պիտի հեռանան: Օտարութեան մէջ կորսուած զաւակներդ պիտի դառնան եւ ըսեն.՝ «Այս տեղը նեղ է մեզի, տեղ տուր որ բնակինք»: Եւ դուն ինքնիրենդ պիտի խորհիս. «Ասոնք ո՞վ ծնաւ ինծի. չէ՞ որ անզաւակ եւ այրի մնացի երբ զաւակներս աքսորուեցան ու պանդխտացան, զիս մինակ թողլով. արդ ուրկէ՞ եկան եւ ո՞վ մեծցուց զանոնք»»: Տէր Աստուած այսպէս կ'ըսէ.՝ «Ահա ես փրկութիւնս հեթանոսներուն վրայ պիտի տարածեմ եւ իմ նշանս ժողովուրդներու մէջ պիտի կանգնեմ. անոնք զրկած պիտի բերեն քու զաւակներդ, իրենց ուսերուն վրայ պիտի բերեն քու դուստրերդ: Թագաւորներ քեզ պիտի որդեգրեն ու թագուհիներ քեզ պիտի սնուցանեն. մինչեւ գետին խոնարհելով քեզի պիտի երկրպագեն ու ոտքերուդ փոշին պիտի լիզեն, եւ պիտի գիտնաս թէ ե՛ս եմ Տէրը. ինծի ապաւինողները երբեք ամօթով պիտի չմնան»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ
ՆԱՄԱԿԷՆ
(6.14-18)

Գալով ինձի, քաւ լիցի որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծենամ: Այդ խաչին միջոցաւ մեղքի աշխարհը մեռած է այլեւս ինձի համար, ինչպէս ես մեռած եմ այդ աշխարհին համար: Կարեւորը մարդուս թլփատուած կամ անթլփատ ըլլալը չէ, այլ նոր արարած ըլլալը: Թող Աստուծոյ խաղաղութիւնն ու ողորմութիւնը ըլլան բոլոր՝ անոնց հետ՝ որոնք այս սկզբունքին համաձայն կ'ապրին. բոլոր՝ անոնց՝ որոնք իր ընտրեալ ժողովուրդը կը կազմեն:

Այսուհետեւ, խնդրեմ, ոեւէ մէկը աշխարհիկ հոգեբով թող զիս չնեղէ, որովհետեւ ես Յիսուսի կը պատկանիմ, ինչպէս մարմնիս վրայ վէրքերուն սպիները կը վկայեն:

Եղբայրներ, մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր բոլորին հետ ըլլայ: Ամէն:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ
(3.13-21)

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.՝ «Ոչ ոք երկինք ելաւ բացի մարդու Որդիէն, որ իջաւ երկինքէն, ուր կը գտնուէր: Եւ ինչպէս որ Մովսէս պղնձեայ օձը բարձրացուց

անապատին մէջ, նոյնպէս ալ պէտք է մարդու Որդին բարձրանայ, որպէսզի անոր հաւատացողը յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չմեռնի, այլ յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած իր Որդին աշխարհ զրկեց, ո՛չ թէ որպէսզի Որդին աշխարհը դատապարտէ, այլ որպէսզի աշխարհը փրկէ: Ով որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր. իսկ ով որ չի հաւատար անոր, արդէն իսկ դատապարտուած է, Աստուծոյ Որդիին չհաւատալուն համար:

«Եւ Դատապարտութիւնը այս է. հակառակ անոր որ լոյսը աշխարհ եկաւ, մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, որովհետեւ չարութիւն կը գործէին: Ով որ չար գործ կը կատարէ, կ'ատէ լոյսը եւ լոյսին չի գար, որպէսզի իր գործերը չյայտնուին: Սակայն ով որ կը կատարէ ինչ որ ճշմարիտ է, լոյսին կու գայ, որպէսզի յայտնի ըլլայ թէ իր գործերը Աստուծոյ կամքին համաձայն գործուած են»:

ՀԻՒԱՆՈՒՆԵՐՈՒՄ ԱՅԾԵԼՈՒԹԻՄ
Բարեհաճեցէք հեռաձայնել
Արժ. Տ. Գառնիկ
Ա. Քհնյ. Գոյունեանի.
514 909 5203 քիփն: